# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1946 ՆՈՅԵՄԲԵՐ–ԴԵԿՏԵՄԲԵՐ Թիւ 11-12

էջ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

Հ. ՍՏԵՓԱՆ ՖԵՐԱՀԵԱՆ. – Ամիրտովլաթ հայ բժշկապետին «Անգիտաց անպէտը» և այլն. 293

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. – Բոլենցի գրչագրական և մանրանկարչական դպրոցը . . . . 310

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏ**

Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ. – Գմբէ՞թ թէ լուսամուտ (Հայկ. ճարտարապետութենէն) (շար.) . . 302

**ԳՐԱԿԱՆ**

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. – Տէր, ինչո՞ւ . . 301

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. – Փօլ Վալերի և իր բանաստեղծութիւնը . . . . . 317

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ. – Ժամադրութիւն – Ծուխին փառքը – Մօտ է՞ գուցէ (անտիպ քերթուածներ). 322–324

Յ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. – Տարուբերում . . . 324

Զ. ՍԻՒՐՄԷԼԵԱՆ. – Ճաշակ մը «Հարց կու տամ ձեզի Տիկիններ և Պարոններ» գործէն (թրգմ. Հ. Փ. Ե.). . . . . 325

ՀՐԱՉ ՔԱՋԱՐԵՆՑ. – Խորհրդաւոր, անսովոր – Ազատութեան սիրահար . . . . 331

Հ. ՄԻՔ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. – Բաժակածաղիկ . 332

**ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ**

Հ. Ա. ՖՈԿՈԼԵԱՆ. – Աբեդիք Կոմսին զարմանալի կեանքը . . . . . . 306

**ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ՀՈՒՆՁՔԸ**

*** – Արսէն-Երկաթ «Սոնաթներ» Գահիրէ, 1945 . . . . . . . 333

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. – Զարուհի Յ. Պահրի-ի «Տագրը» և «Փառանձեմ» վէպերը . . . 334

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. – «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», Երեւան, 1938 . . . . 337

— «Պատմութիւն պատերազմաց», Երեւան, 1938 . . . . . . . 339

— «Գուրգէն Արծրունի». գրեց Ժոզէֆ Լորան. թրգմ. Հայկ. Պէրպէրեան, 1946 . . 340

# SOMMAIRE

1946 Novembre-Décembre N. 11-12

PAG.

**ACADÉMIE ARMÉNIENNE – PHILOLOGIE**

*P. E. Férahian.* – « Ankidatz anbède » (Inutile aux ignorants) d'Amirdovlath le médecin arménien . . . . 293

*H. Kurdian.* – L'école des Manuscrits et de la Miniature à Polentz . . . 310

**BEAUX-ARTS**

*S. Djévahirdjian.* – Coupole ou lucarne ? . 302

**LITTÉRATURE**

*P. V. Hovhannessian.* - Pourquoi, Seigneur ? 301

*P. M. Djanachian.* – Paul Valéry et sa poésie . . . . . . . 317

*K. Garvarentz.* – Rendez-vous – La gloire de la fumée – C'est proche peut-être (poésies inédites) . . . 322–324

*Y. Kouyoumdjian.* – Le ballottement . . 324

*Z. Surmélian.* – Un essai de « I ask you Ladies and Gentlemen » (trad. par le Rév. P. Ph. Y.) . . . . . 325

*Hratch Katcharentz.* – Mystérieux, insolite – Amoureux de la liberté . . . 331

*P. M. Hovhannessian.* – Calycanthe . . 332

**BIOGRAPHIE**

*P. A. Fogolyan.* – La vie merveilleuse du comte Abédik (trad. de l'hongrois) . 306

**RECENSIONS**

*** – « Les Sonates » d'Arsène Yergath, Le Caire, 1945 . . . . . 333

*P. M. Djanachian.* – Les romans de M.me Zarouhi Bahri : « Le beau-frère » et « Parantzème » . . . . . 334

*H. Kurdian.* – « Les chroniques de Zacharie d'Akulis », Erivan, 1938 . . . 337

— « Histoire des guerres », Erivan, 1938. 339

— « Kourkène Artzrouni » (par Joseph Laurent, trad. par Mr. Haig Berbérian) 340

423

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ՃԴ. ՌՅՂԲ – ՌՅՂԶ 1843 - 1946

ՏԱՐԻ 104

ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ Թիւ 11 - 12

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

## ԱՄԻՐՏՈՎԼԱԹ ՀԱՅ ԲԺՇԿԱՊԵՏԻՆ «ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ»Ը

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Տ. Կ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1939 էջ 301 և 1940 էջ 106)

Այս աշխատութիւնը սկսած էի Տէր Կ. Բասմաջեանի «Յիշատակաց բանասիրական գործունէութեան» առիթով (տես Բազմավէպ 1939, էջ 301). և ով կը կարծէր թէ այն թուականէն հազիւ երեք տարի անցած, ճիշտ համաշխարհային պատերազմի ժամանակ, մեզմէ ընդմիշտ պիտի բաժնուէր (վախճ. 17 Մայիս 1942) հայ մտքի այս անխոնջ մշակը, որ գրեթէ բնութեան դէմ իսկ մաքառելով – քանի որ crampe des écrivains ունէր – երբեք ձեռքէ չթողուց գրիչը։

Բասմաջեան ծնած էր 1864ին Պոլսոյ մէջ. գաղատացի ծնողաց զաւակ՝ ինքն ալ ի սկզբան Թրքախօս էր, բայց քիչ ատենէն ինքնօգնութեամբ սորվեցաւ ոչ միայն աշխարհաբար այլ և գրաբար. Նախնական ուսումը առաւ Բանկալթիի Ս. Յակոբայ Վարժարանին մէջ. 1885ին աւարտելով Պոլսոյ դեղագործական վարժարանը, նախ դեղարան մը բացաւ Սկիւտարի մէջ, յետոյ գաւառները շրջելով, հուսկ իր շունչը առաւ Եւրոպա, ուր հետեւեցաւ լեզուագիտական, հնագիտական, դրամագիտական ուսումնասիրութեան և այս բոլորին իբր պտուղ՝ Փարիզի մէջ հիմնեց «ԲԱՆԱՍԷՐ» հնախօսական–





digitised by A.R.A.R.@